ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 12, 1958 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ռ. Հարությունյան

Feod-ԻՆ ԵՎ beneficium-ԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մեզ չեն հասել վաղ միջնադարին վերաբերող պաշտոնական բնույթ կրող վավերագրեր, պետական օրենքներ, կարգադրություններ, դատաստանական և այլ իրավաբանական ակտեր, որոնց բովանդակությունից հնարավոր լիներ ճշգրիտ եզրակացությունների հանգել այս կամ այն սոցիալական-իրավաբանական տերմին-բառը և նրա իմաստը որոշելիս։ Միակ իրավաբանական կոդեքսը, եթե միայն կարելի է այսպես անվանել օրենքների մի անսիստեմ ժողովածու, այդ Մխիթար Գոշի «Դատաստանագիրք»-ն է XIII դարի սկզբին գրած, որն իր մեջ պարունակում է, բացի եկեղեցական կանոնական հոդվածներից, նաև աշխարհական օրենքներ, և ապա՝ Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագիրք»-ը, որը վերարտադրում է նույն Գոշի օրենքները՝ մասամբ փոփոխած և հարմարեցրած Կիլիկիայի միջավայրին։

Վաղ միջնադարին վերաբերող նման խնդիրներ քննության առնելիս հանում է դիմել այդ ժամանակաշրջանի մեր պատմագիրների մոտ պատահական տեղեկությունների և վկայությունների մեջ գործածված տերմինաբանական նշանակություն ունեցող բառերին և, ավելի շատ, եկեղեցական կանոններին, որոնք բավական շատ են թվով և եկեղեցական հարցերի հետ միատեղ շոշափում են նաև իրենց ժամանակի սոցիալ-տնտեսական հարաբերությունների վերաբերյալ մի շարք խնդիրներ։

Նիկ. Ադոնցը և նրան համակարծիք ակադ. Հ. Մանանդյանը գտնում են, որ հայ եկեղեցին խորապես ազդվել և ենթարկվել է տիրող նախարարական կարգերին, եկեղեցական իշխանությունը համակերպվել է ֆեոդալական ներգործող միջավայրին և ընդունել այդ միջավայրի պատրաստի ձևերը[1]։

Պատմական փաստերի վրա հիմնված այս ճիշտ դիտողությունը հնարավորություն է տալիս եկեղեցական ֆեոդալիզմին վերաբերող մի քանի տերմինների ճշգրիտ որոշմամբ՝ մոտավոր ճշտությամբ որոշելու նաև աշխարհիկ ֆեոդալիզմին համապատասխան հարաբերությունները և այդ հարաբերություններն արտահայտող տերմինները։

Այս հոդվածում քննության ենք առնում մի քանի, գերազանցապես եկեղեցական, բառ-տերմիններ, որոնց պարզաբանումը կարող է օժանդակել լույս սփռելու միջնադարյան Հայաստանում տիրող ֆեոդալական, գլխավորապես հողային հարաբերությունների վրա։

---

[1] *Տե՛ս Н. Адонц,* Армения в эпоху Юстиниана, *1908, էջ 361. հմմտ. պրոֆ. Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 128։*

* * *

Հայ եկեղեցական գրականության մեջ, առավել չափով եկեղեցական կանոններում, խիստ հաճախ ենք հանդիպում «ժառանգություն» և «ժառանգաւոր» բառերին։

Բերենք մի քանի բնորոշ օրինակներ.

1. «Ի տգիտութենէ և ժողովուրդն խոպանացեալ մնայր, և մեք տարակուսեալք, ոչ գտաք զայլ հնարս, որ զնոսին ինքեանս կարգեալս ի քահանայութիւն՝ հրաժարեցուցեալ և ի բնակութենէ օտարաց պիտանեաց և գիտնոց տուաք զժառանգութիւն նոցա» («Կանոնք սրբոյն Սահակայ հայոց Հայրապետի», գլ. ԾԵ, կանոն ԺԲ, տե՛ս «Կանոնգիրք Հայոց», հրատ. Ա. Ալտնյանի, Թիֆլիս, 1913, էջ 21)։

«Իսկ ի վանս բնակեալք կուսութեան են պարապեալք, միշտ մարտընչելով ընդ ուխտին, զսրբութիւն վառեալ բորբոքէ, և անյապաղ զպաշտաման կատարել զկարգ՝ զխաղաղութիւն խնդրելով ամենայն աշխարհի, և զգեղջ շինութիւն և զառողջութիւն ի տուէ և ի գիշերի բազում արթնութեամբ. վասն այսորիկ ազատ յամենայն հարկապահանջ իշխանաց սահմանս ընկալաւ և անդս, երիցագոյն պատիւ ժառանգեաց յուխտի սրբութեան եկեղեցւոյ» («Կանոնգիրք Հայոց», էջ 34—35)։

2. «Վասն շնորհի և ժառանգութեան սահմանեցաք, թէ ի սկզբանէ որպիսի հրաման ի սրբոյն Գրիգորէ է լեալ՝ նոյնպէս և եղիցի, որոյ շատ է ժառանգութիւնն, զշատն կերիցէ, որոյ սակաւ՝ զսակաւն կալցի, և մի ըստ ծխոյ բաժանեսցեն զշնորհն, զի զժառանգութիւն սրբոյ եկեղեցւոյ իբրև զազատութիւն է, զոր երանելոյ սրբոյն Գրիգորի և թագաւորին մերոյ Տրդատայ զատուցեալ են։ Արդ իւրաքանչիւր ոք զհարանց ժառանգութիւնն կալցի և սրբոյ եկեղեցւոյ պաշտամանն հպատակ կացցէ և վարդապետին ի հնազանդութեան...» («Կանոնք Ս. Դունայ ժողովոյն», կանոն Ե, «Կանոնգիրք Հայոց», էջ 123)։

3. «Այրի երիցունք, թէ իցեն պարկեշտք և ծերք, և կամ մանկունս սնուցանելոյ ունիցին, կացցեն յեկեղեցին, և թէ ոչ այսպէս, գնասցեն ի վանս և յանապատս, և թէ ոչ գնասցեն, ի բաց կացցեն ի ժառանգութենէն և ի կարգէն» («Կանոնք Երուսաղէմայ ժողովոյն», կանոն ԺԴ, տե՛ս «Կանոնգիրք Հայոց», էջ 191)։

4. «Բայց յետ բազում ժամանակաց մինչ խանգարեալ էր հայրապետանոցն. և ցրուեալ ժառանգութիւնք եկեղեցւոյն, զայս տեղիս առին ոմանք և վերստին շինեցին...» (Ստ. Օրբելյան, «Պատմ. նահ. Սիս.», Տփխիս, էջ 250)։

5. Բառումբ են ժամանակիս կրօնաւորաց, որ յաշխարհի առանց ժառանգութեան էին, և յորժամ զձև կրօնաւորութեան ընկալան, տեարք եղեն ի վանորայս բազում ժառանգութեան» (Ն. Շնորհալի, «Թուղթ ընդհանրական», հմմտ. «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հատ. Ա, էջ 834)։

6. «Բայց այլ ամենայն միրգ առաքեսցին ի տունս եպիսկոպոսի և երիցանց, և ի սեղանն մի մատիցեն. և զի եպիսկոպոսն և երիցունքն բաժանեսցեն սարկաւագաց և այլ ժառանգաւորաց» («Սահմանք և կանոնք առաքելոց», կանոն Դ, տե՛ս «Կանոնգիրք Հայոց», էջ 236)։

7. «Եթէ ոք երէց կամ սարկաւագ, կամ ով և իցէ ի ժառանգաւորաց, ի բաց ընկեցեալ զիւրն...» (նույն տեղում, էջ 237)։

8. «Եթէ եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ այնմ ժառանգաւորաց, որ կարօտն իցէ և ոչ տացէ զպէտսն, որոշեսցի. յամենայն ի նմին՝ լուծցի որպէս սպանող եղբօր իւրոյ» (նույն տեղում, էջ 246)։

9. «Եթէ ոք ժառանգաւոր կամ ժողովրդական մտցի ի ժողովարանս հրէից կամ թերահաւատի առ ի աղօթել, լուծցի և որոշեսցի» (նույն տեղում, էջ 247)։

Ուրեմն առաջին, երկրորդ և երրորդ կանոնական հատվածների մեջ, ինչպես պարզ երևում է տեքստից, «ժառանգութիւն» բառն ունի նյութական բովանդակություն։ Երկրորդ օրինակի մեջ ցայտուն կերպով ի հայտ է գալիս «ժառանգութեան» քանակական հատկանիշը. «որոյ շատ է ժառանգութիւնն, զշատն կերիցէ, որոյ սակաւ՝ զսակաւն կալցի։ Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի անունների հիշատակությունը «սրբոյ եկեղեցւոյ զժառանգութիւնն իբրև զաղատութիւն» ընդունելու մասին՝ ակնարկում է, անշուշտ, Ագաթանգեղոսի և Փավստոս Բուզանդի վկայություններն այն մասին, որ Տրդատ թագավորն իր իշխանության բոլոր տարածության վրա եկեղեցականների սպասավորությանն էր հատկացրել՝ յուրաքանչյուր ավանում յոթական «հող երդոյ» և յուրաքանչյուր ագարակում չորսական «հող երդոյ» (տե՛ս «Ագաթանգեղեայ Պատմութիւն Հայոց», գլ. ՃԺԹ, Տփխ., 1913, էջ 427. հմմտ. Փավստոս, հրատ. Դալատյանի, Թիֆլիս, 1913, հինգերորդ տպագր., գլ. ԼԱ, էջ 345)։ Ուրեմն վերոհիշյալ հոդվածներում «ժառանգութիւն»-ը պատկերանում է որպես հող, անշարժ գույք, որը ժառանգականորեն անցնում է հայրերից որդիներին։

«Ժառանգութեան» մյուս հատկանիշը նրա պայմանականությունն է. նա թեև անցնում էր ժառանգաբար, «ի հարանց ժառանգութիւն» էր, բայց պայմանավորված էր «սրբոյ եկեղեցւոյ պաշտամանն հպատակ» կենալու հանգամանքով. նա տրված էր dominium utile-ի իրավունքով։ Վերջին մոմենտն է շեշտված մեր բերած առաջին, երրորդ և հինգերորդ օրինակներում։ Տգետ քահանան, որն անկարող է պաշտամունք կատարել, զրկվում էր «ժառանգութիւն»-ից, որն անցնում էր «գիտնոց» ձեռքը, թեկուզ և այդ գիտունքը «ի բնակութենէ օտար» լինեին, այսինքն բուն քահանայական տոհմից չլինեին, միայն թե «պիտանի» լինեին։ Նույնն էր կատարվում այրի անպարկեշտ երեցների նկատմամբ, ինչպես վկայված է երրորդ օրինակում։ Վերջինիս մեջ ուշադրության արժանի է «ի բաց կացցեն ի ժառանգութենէն և ի կարգէն» արտահայտությունը, որը պարզ կերպով ցույց է տալիս, որ «ժառանգութիւն» տերմինը պաշտոնին՝ քահանայական կարգին չի վերաբերում, այլապես «կարգը» նորից չէր հիշվի. այստեղ և սրա նման դեպքերում շեշտվում է ոչ թե եկեղեցական իշխանության ժառանգականության մոմենտը, ինչպես այդ ենթադրում է ակադ. Մանանդյանը (տե՛ս «Ֆեոդալիզմը հին Հայաստանում», էջ 128), այլ նրանց պաշտոնի հետ կապված նյութական անշարժ կալվածների և, հավանաբար, նաև եկեղեցական եկամուտներից բաժին ստանալու իրավունքը։

«Ժառանգութիւն» և «ժառանգաւոր» բառերի տերմինաբանական իմաստը լավագույն կերպով արտահայտված է Օրբելյանի մոտ Նորավանքին նվիրած իր «հայրենարաժին» Զուայ և Բարկոի գյուղերի մասին խոսելիս։

Զուայ գյուղի նվիրման առթիվ նա գրում է. «Եւ արդ՝ մի ոք խշխեսցէ իշխանութիւն վարել ի վերայ այս շինոյս. և կամ հարկ կամ գիւան կամ մալ կամ այլ ինչ դնել ի վերայ. այլ միայն իշխեսցեն առաջնորդք սուրբ ուխտիս Նորա-

վանից և վայելեսցեն ժառանգաւորք տանս և սպասաւորք սրբոց նշանացս, և զմեզ աղօթից և պատարագաց հանապազ հաղորդս կալցին ի սուրբ եկեղեցիս»:

Քարկուփի մասին.

«Դարձեալ ետու զԴարկուփ իւր ամենայն սահմանօք ի վայելումն և ի ժառանգութիւն առաջնորդաց տանս և այլ եղբայրութեանս։

Եւ յայսմ հետէ մինչև յուիտեան հաստատ հայրենիք լիցի նա սուրբ եկեղեցւոյս Նորավանից. և թէպէտ ժառանգաւորք սոքա լիցին, այլ զշինութենէ վանիցն և զլուսաւորութենէ եկեղեցւոյն մի՛ անիծեալ արասցեն, այլ ամենայն ջանիւ հոգասցեն որպէս զսեպհական տանէ» (էջ 493—494)։

Այս հատվածում պարզ ցույց է տրված «ժառանգութեան» և «սեպհականութեան» տարբերությունը։ Ժառանգաւոր-ը ֆեոդալ է, պայմանական տիրապետող, իր ծառայության (այստեղ՝ հոգևոր ծառայության), որը պարզ կերպով որոշված է նվիրաբերողի հոգու համար կատարվելիք պատարագներով (պարտավորություններով)[1]։

Այս բոլորից կարելի է գալ այն եզրակացության, որ «ժառանգութիւն» բառը հայ եկեղեցական ֆեոդալական տերմինոլոգիայի մեջ ստացած է եղել նյութական որոշակի իմաստ, նա նշանակել է եկեղեցական կալվածք, որ տրվում էր եկեղեցականներին ժառանգաբար՝ dominium utile-ի իրավունքով։

Ինչպես տեսնում ենք, «ժառանգութիւն» տերմինն իր այս առումով համընկնում է Արևմտյան Եվրոպայի feod, lehn տերմիններին և ներկայացնում է այս տերմինների էկվիվալենտը հայ եկեղեցական ֆեոդալական տերմինոլոգիայի մեջ։

Պետք է նկատել, սակայն, որ հայ եկեղեցական տերմինոլոգիայի մեջ «ժառանգութիւն» տերմինը չի արտահայտել միայն նյութապես հողը, ջուրը և այլ անշարժ գույք, որոնք տրվում էին եկեղեցականներին օգտագործելու իրավունքով։ Այս տերմինի տակ հասկացվել են նաև եկեղեցական այն հասույթները, որոնք տեսականորեն՝ կամովին, բայց փաստորեն՝ պարտադիր կարգով ստացվում էին ժողովրդից։ Ստ. Օրբելյանի «Պատմութեան» մեջ հանդիպում ենք հետևյալ հետաքրքրական հատվածին։

«Ապա այնուհետև սկսաւ փարթամանալ և պայծառանալ տունն այն (խոսքը Տաթևի մասին է — Բ. Հ.) առաւել քան զառաջինն, և զամենայն յափշտակեալ ժառանգութիւնսն անդրէն դարձուցանէին. քանզի Մաքենոցացիքն զԵղարքունի էին յափշտակեալ, և ոմն մի զՎայոց ձոր, և եպիսկոպոս նստեալ. և ոմն մի՝ զԵրնջակայ գաւառն, և անդ նստեալ եպիսկոպոս յԵրնջակայ վանքն, և Դողթնացիքն զԲոտնձորն և զԲուստ և զՕրդուատ։ Նմանապէս և իշխանքն զգեղանն էին բաշխեալ ազատաց իւրեանց, զորս շրջարերական թղթօք տեառն Սարգսի, որ ահագին նզովիւք փակեալ էր, զի մի ոք իշխեսցէ յանդգնիլ ի հերքումն յայսմ վիճակիս...» (Ստ. Օրբելյան, էջ 304—305)։

Հատվածի առաջին մասում խոսքը վերաբերում է ոչ թե հիշված գավառների ամբողջ հողին ու ջրին, այլ այդ գավառների ժողովրդից ստացվող հասույթներին, որոնք առաջ Տաթևինն էին եղել, իսկ այժմ խլել ու յուրաց-

[1] Ուղղագիծ փակագծերի մեջ առնված հատվածը հեղինակը լրացրել է ձեռագիր մի թերթիկով, այն դնելով հոդվածի մեքենագիր թերթերի մեջ։

ռել էին տեղական եպիսկոպոսները և Սարգիս կաթողիկոսի կարգադրությամբ նա են դարձվում Սյունյաց աթոռին։

«Ժառանգություն» բառի այսպիսի իմաստավորումը չի խանգարում նրան feod-ի իմաստ վերագրելուն։ Հայտնի է, որ feod-ը Արևմտյան Եվրոպայում անպայման հողային տարածություն չպետք է լիներ։ «Ֆեոդ» կարող էր լինել մինչև իսկ որևէ եկամտաբեր հոդված (տե՛ս Н. Грацианский, Хрестоматия по истории средн. веков, т. I, М., 1939, стр. 127).

* * *

«Ժառանգությանն» այս նյութական իմաստից է բխել նաև «ժառանգաւոր» բառի որպես սոցիալական տերմինի իմաստը։ «Ժառանգաւոր» բառը մեր հին մատենագրության և կանոնագրքերի մեջ գործ է ածվում մեծ մասամբ որպես եկեղեցական տերմին, եկեղեցականի, այսինքն կրոնական պաշտաման սպասավորողի իմաստով։ «Ժառանգաւոր» էին կոչվում ոչ միայն եպիսկոպոսը, քահանան, սարկավագը, որոնք եկեղեցու կարգավոր պաշտոնյաներն էին, այլև ամբողջ եկեղեցականների դասը, որի մեջ մտնում էին նաև քահանաների զավակները, եղբայրները և ուրիշները, որոնք եկեղեցում որևէ սպասավորություն էին կատարում (կիսասարկավագ, գրակարդաց, սաղմոսերգու, դպիր և այլն). սրանք բոլորն էլ մասն ունեին եկեղեցու հասույթներից և հող էին ստանում եկեղեցուն հատկացված ֆոնդից, այսինքն եկեղեցու «ժառանգությունից»։ Հենց այս վերջին հանգամանքով է պայմանավորված նրանց «ժառանգաւոր», այսինքն ժառանգություն ունեցող անվանումը։ «Ժառանգաւոր» բառի մի այլ բացատրություն, որը հիմնված է պաշտոնի ժառանգականորեն անցնելու հանգամանքի վրա, ճիշտ համարել չի կարելի, քանի որ կարգը և պաշտոնները ժառանգականորեն չէին անցնում անպայմանորեն հորից որդուն. նրանք ժառանգականորեն հատկացված էին ամբողջ, այսպես կոչված, «քահանայական դաս»-ին, որի անդամներից, եպիսկոպոսի կամ համայնքի ընտրությամբ, արժանավորներին տրվում էր աստիճան՝ կարգ, ըստ որում՝ նախապատվությունը տրվում էր քահանայի որդուն։ Այս վերջին հանգամանքը փաստորեն ստեղծել էր, կարծես, քահանայական տան ժառանգականություն։ Դա կարող էր, սակայն, միշտ էլ խախտվել, երբ քահանան տգետ էր, երբ նա հանցագործ էր և այլն։ Ինչպես հայտնի է, բարձր հոգևորականությունը միջնադարում, համաձայն եկեղեցական կանոնների՝ կուսակրոն էր, ուստի և ժառանգներ ունենալ չէր կարող։

«Ժառանգաւոր»-ը, եկեղեցուց «ժառանգությունն» (feod) ստանալով՝ բնականորեն, դառնում էր եկեղեցու ֆեոդալը feodataire-ը։ Եթե այդ եկեղեցականը կուսակրոն չէր, ուներ իր ժառանգները, և այդ ժառանգներն իրենց կրթական աստիճանով և վարքով համապատասխան էին և կարող էին շարունակել եկեղեցուն սպասավորել, ապա «ժառանգությունն» feod-ը անցնում էր նրանց։

Այսպիսով պարզ է, որ հայ եկեղեցական ֆեոդալական տերմինոլոգիայի մեջ «ժառանգաւոր» տերմինը հավասարազոր է Արևմտյան Եվրոպայի feodataire, Lehnsh alter տերմիններին։

Գործածվել են արդյոք «ժառանգություն» և «ժառանգաւոր» տերմինները աշխարհիկ ֆեոդալական տերմինոլոգիայի մեջ feod-ի և ֆեոդալի իմաստով, այդ դժվար է ասել։ Պատմագիրների մոտ և դատաստանագրքերի մեջ ոչ եկեղեցական իմաստով գործածված «ժառանգաւոր» բառը ավելի շուտ «ժառանգորդի», որևէ մեկի ժառանգությանը մասնակից լինելու իրավունք ունեցողի իմաստ ունի, քան ֆեոդալի։

Այսպես, օրինակ, «Ասորական դատաստանագրքի» թարգմանության I. (30-րդ) հոդվածում կարդում ենք.

«Եթէ ոք ազատէ զծառայ իւր պայմանաւ, և սահմանէ ամս յայտնիս ծառայել որդւոց իւրոց կամ ժառանգաւորի ազատութեան հրաման ունի յօրինացս, որպէս անձնիշխան շրջել» («Ասորական դատաստանագիրք», հրատ. Ա. Ղլանյանի, 1917, էջ 15)։

* * *

«Ժառանգություն» բառին զուգընթաց եկեղեցական կանոնների մեջ հանդիպում ենք «շնորհ» բառին, որի իմաստի պարզաբանումը նույնպես կարևոր է միջնադարյան ֆեոդալական հարաբերությունների հետ կապված մի շարք խնդիրների լուծման համար։ Մեջ ենք բերում «շնորհ» բառի գործածության մի քանի բնորոշ դեպքեր քաղելով նույն եկեղեցական կանոններից։

«Կանոնք Դունայ ժողովոյն» (տե՛ս «Կանոնգիրք», էջ 122—130)։

1. «Եպիսկոպոսք իւրաքանչիւր վիճակաց և անապատից տեսչութիւն և հոգաբարձութիւն արասցեն, ի լոյս և ի պաշտօն և ի դպրոցս հայել և իւրեանց պաշտօնէիւքն կերակրիլ և վայելել ի սրբոցն շնորհէ» (կանոն Դ, էջ 122)։

2. «Վասն շնորհի և ժառանգութեան սահմանեցաք... մի ըստ ծիսոյ բաժանեսցեն զշնորհն» (կանոն Ե, էջ 123)։

3. «... Իշխանութիւն լիցի վարդապետին զշնորհս եկեղեցւոյ հանել յայնպիսեացն (որք յուխտէ եկեղեցւոյ զկարգ և զպաշտօն թողին և հեծելութիւն ստացան) և արժանաւոր քահանայից և պաշտօնէից մերձաւորաց տալ...

... զայնպիսիսն գրով և կնքով մերժել ի շնորհացն և տալ մերձաւորաց նոցա» (կանոն Զ, էջ 123—124)։

4. «Եթէ ոք այր կամ կին ի ժառանգաւորաց սրբոյ եկեղեցւոյ անորդի իցէ... մի իշխեսցէ հեռացուցանել զհող և զջուր և զամենայն շնորհս եկեղեցւոյն... բայց զշարժուն ոք և զհրիտակ ում և կամի տալ արժան է, և թէ վաճառել կամի և հոգեաց տալ՝ իշխան է...

... սակայն զկեաս շնորհին կալցէ յաղագս ձեռնադրութեան ազատ ի հարկէ և ի բեկարէ... և զկեաս շնորհին և զհողն և զջուրն բովանդակ սրբոյ եկեղեցւոյ թողցէ վախճանեալ քահանայն և կին նորա.— ամենայն իսկ շնորհն մերձաւորացն եղիցի»... (կանոն Ը, էջ 124—125)։

5. «...այլև ոմանք յաղատաց ըստ իւրաքանչիւր կամաց բաժանեն զշնորհս եկեղեցւոյն և զառաջնորդաց զիշխանութիւն և զգործ յաւիշտակեն»... (կանոն Թ, էջ 127)։

«Կանոնք Յովհաննու իմաստասիրի Օձնեցւոյ» (տես «Կանոնգիրք», էջ 135)։

6. «... Ըստ կարգի զնստացուցն ազգաւ սեպհականել զեկեղեցւոյ շնորհն»...

«Կանոնք Ս. Սահակայ Հայրապետի» («Կանոնգիրք», էջ 17—18)։

7. «... զգեղեաս և զզինուորս ամենեին իսկ պարտ է որոշել ի շնորհեն վայելից, որ ինչ ի ժողովրդականաց ի տուն աստուծոյ...»։

Ինչպես հայտնի է, «շնորհ» բառը եկեղեցական-կրոնական գրականության մեջ գործ է ածվել, սովորաբար, այն հոգևոր կարողությունների իմաստով, որոնք, ըստ ժամանակի կրոնական ըմբռնման, տրվում էին աստծուց որպես պարգև-բարիք այս կամ այն անձին. մանավանդ կրոնավորներին՝ նրանց ձեռնադրության, օծման ժամանակ։

Ինչպես կարելի է դիտել, վերոհիշյալ բոլոր կանոնների մեջ «շնորհ» բառը գործ է ածվում ոչ իր այս սովորական առումով։ Այստեղ նա ստացել է այնպիսի առարկայի իմաստ, որը կարելի է վայելել, որով կարելի է կերակրվել (1-ին օրինակ), որը կարելի է բաժանել (2-րդ օրինակ), մեկից խլել և ուրիշին տալ (3-րդ օրինակ), որոշ պայմաններում հարկի և բեկարի տակ դնել կամ՝ ազատել (4-րդ օրինակ)։

«Շնորհ» բառի վերոհիշյալ գործածությունից կարելի է գալ այն եզրակացության, որ նա կամ գույք է, կամ գույքից ստացվող որոշ եկամտից օգտվելու իրավունք, որը տրվել է եկեղեցականին պայմանականորեն, վերջինիս վրա դրած որոշ պարտականությունների կատարման կապակցությամբ, և որը կարող էր հետ խլվել, եթե նա՝ եկեղեցականը այդ պարտավորությունները չէր կատարում, կամ թե իր վարքով ու կրթական մակարդակով չէր համապատասխանում իր կոչմանը (3-րդ և 7-րդ օրինակներ)։

Ինչպես տեսնում ենք, իր այս իմաստով շնորհ-ը համանիշ է դառնում վերևում հիշված ժառանգութիւն տերմինին։

Սակայն, դիտելով «շնորհ» բառի գործածությունը կանոնական բազմաթիվ հոդվածներում՝ նկատում ենք, որ սա գործ է ածվում, ըստ մեծի մասին, եկեղեցական այլևայլ հասույթներից «ժառանգաւոր»-ներին տրվող բաժնի՝ «մասն»-ի իմաստով, ժամանակավորապես, միայն ծառայության ժամանակամիջոցին։ Այս «մասն»-երը միանգամայն որոշ էին քահանաների, սարկավագների և այլ ժառանգավորների նկատմամբ։

Այսպես Ներսես կաթողիկոսի և Ներշապուհ Մամիկոնեից եպիսկոպոսի կանոնխմբի ԺԴ կանոնում ասված է.

«... Այլ զպատուս և զմուտս ժողովրդականք միաբանութեամբ ի սուրբ եկեղեցին հատուցեն ամենայն յօժարութեամբ անխափան, ... և քահանայից առեալ ի սրբոյ եկեղեցւոյ բաժանեսցեն կարգաւորաբար, որպէս օրէն է. զըլխաւոր քահանայիցն Ի մասունս և կէս մասին և այլ քահանայքն մէն մի Ի մասունս, և սարկաւագունքն մի մասն և կէս մասին, և դպիրքն և այրի կանայք թէ իցեն պարկեշտք մի մասն առանց ամենայն հակառակութեան»։ («Կանոնգիրք», էջ 111)։

Սահակ Հայրապետի 6-րդ կանոնի մեջ («Կանոնգիրք», էջ 17—18) «շնորհ» է անվանված այն, ինչ որ ստացվում է «ի ժողովրդականաց ի տուն աստուծոյ», և բաժանվում «ամենայն ուխտի մանկանց» միջև. այս «շնորհէն վայելից» զրկվում են տգեղները և զինվորները, եթե նրանք և նրանց զավակները չեն ուզում ուսում ստանալ և արժանի դառնալ այդ «շնորհ»-ին։ «Շնորհ» բաշխում էր եկեղեցական «առաջնորդ»-ը, «վարդապետ»-ը, վիճակավոր եպիսկոպոսը, ինչպես կարելի է դիտել մեր բերած 5-րդ օրինակից. նրան էր վե-

բապահվում նաև ուխտագանց եկեղեցականից «շնորհ»-ը հետ խլելու և ուրիշներին տալու իրավունքը (3-րդ օրինակ)։

Եկեղեցական մի քանի կանոններում «շնորհ» բառի գործածության այնպիսի դեպքեր կան, որ հիմք են տալիս ենթադրելու, թե «շնորհ» բառի իմաստն ընդգրկել է նաև եկեղեցականներին տրվող հողն ու ջուրը։ Այսպես, օրինակ՝ Դվինի ժողովի Ը. կանոնի մեջ կարդում ենք հետևյալ հատվածը։

«Եւ զկէս շնորհին և զհող և զջուրն բովանդակ սրբոյ եկեղեցւոյ թողցէ վախճանեալ քահանայն և կին նորա. ամենայն իսկ շնորհն մերձաւորացն եղիցի՝ եթէ ոչ որդիս կամ թոռունս ունիցին, զի չվայելէ զսրբոյ եկեղեցւոյ ժառանգութիւն յարժանաւոր մերձաւորացն օտարացուցանել և տալ հեռաւոր օտարաց։ Բայց եթէ անկաւորացն կամաւորութեամբ վաճառել իսկ, թողուցուսցէ վարդապետն, զայն մի շինականի ումեք, այլ յուխտէ եկեղեցւոյն, թէև հեռաւոր ևս իցէ. իշխան է վարդապետն և մերձաւորին չմերձեցուցանել։ Իսկ եթէ գեղջն երեցուն դիպի ժառանգութիւնն մնալ, եղիցի ժառանգութիւնն սրբոյ աթոռոյն, և ում կամեսցի շնորհեսցէ վարդապետն, միայն արժանաւորաց և գիտնոց» («Կանոնդիրք Հայոց», էջ 125—126)։

Այս հատվածի մեջ ուշագրավն այն է, որ մի կողմից շնորհը բաժանվում է «հողից ու ջրից» («և զկէս շնորհին և զհողն և զջուրն բովանդակ»), իսկ մյուս կողմից «շնորհ»-ը համարվում է «եկեղեցւոյ ժառանգութիւն», որը կարելի է վարդապետի թույլտվությամբ մինչև իսկ վաճառել, միայն թե՝ ոչ շինականի, այլ եկեղեցու ուխտից որևէ մեկին։ Ապա նաև այն, որ եթե գյուղի անժառանգ մեռնող քահանայի ժառանգությունն է մնում, նրա մահից հետո վերջինս ամբողջությամբ անցնում է եկեղեցու տրամադրության տակ և եպիսկոպոսը կարող է շնորհել այն արժանավորներից և գիտուններից նրանց, ում որ ինքը կամենա։

Ինչպես տեսնում ենք, այստեղ «շնորհ»-ը հաղիվ թե կարելի լինի հասկանալ միայն որպես եկեղեցուն նվիրաբերած կամ նրան հասանելիք տուրքի այն բաժինը, որ շնորհվում էր եկեղեցու կողմից իր պաշտոնյաներին։ Այստեղ ավելի հավանական է, որ «շնորհ»-ը ընդգրկում է նաև հողային գույքի կամ թե նրանից ստացվող եկամտի իմաստը ևս։

Սակայն այստեղ մեզ հետաքրքրողն այն է, թե ինչ տնտեսական հարաբերություն է արտահայտում «շնորհ» բառը։ Դժվար չէ տեսնել, որ նա այստեղ արտահայտում է այն հարաբերությունը, ինչ որ միջնադարյան Արևմտյան Եվրոպայում եկեղեցական բենեֆիցիումը որպես ֆեոդալական տերմին։ Հայտնի է, Արևմտյան Եվրոպայում յուրաքանչյուր եպիսկոպոսական թեմ, ինչպես և ավելի մանր միավորներ, ինչպիսին է, օրինակ, եկեղեցական համայնքը, ունեին իրենց գույքերը, հաճախ անշարժ, որոնցից ստացված եկամուտներով պահպանվում էր կրոնավորական դասը, (Суворов, Курс церковного права, М., 1909)։ «Շնորհ» բառը իր ստուգաբանությամբ ևս միանգամայն համընկնում է beneficium-ին, որը նույնպես իր սկզբնական կրոնական առումով կրոնա-եկեղեցական գրականության մեջ աստվածային հոգևոր պարգև է նշանակել և ապա՝ ֆեոդալիզմի շրջանում նյութական, գլխավորապես հողային պայմանական պարգևի նշանակություն է ստացել։ «Շնորհ» բառը ռուսական ֆեոդալական տերմինոլոգիայի մեջ համապատասխանում է „благодать"-ին և ապա՝ жалованье ֆեոդալական տերմինին՝ սրա միջնադարյան առումով։

Այսպիսով, պարզվում է, որ միջնադարյան հայ եկեղեցական տերմինաբանության մեջ արևմտյան եվրոպական եկեղեցական feod-ին համապատասխանել է միջնադարյան հայերենում «ժառանգություն» տերմինը, իսկ beneficium-ին «շնորհ» տերմինը։

Մ. Ավդալբեգյան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ

(Ներսես Լամբրոնացու թարգմանած Գրիգոր պապի պատմությունը)

«Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից»[1] ժողովածուում, ի թիվս այլ նյութերի, տպագրված է նաև Հուգա Իսկարիոտացու մասին պարականոն գրույցին խիստ առնչվող մի վարք՝ «Ցիշատակ վարուց սքանչելի առն աստուծոյ սրբոյն Գրիգորի Հռոմայ պապունն»։

Այդ վարքը, ինչպես նաև Հուդայի շուրջ հյուսված գրույցը շատ գծերով հիշեցնում է առասպելական Էդիպ արքայի պատմությունը. երկուսն էլ հեթանոսական լեգենդի քրիստոնեական դերասրուկի հետաքրքրական նմուշներից են։ «Ժանրային հատկանիշներով միանգամայն տարբեր լինելով,— գրված է վարքի ծանոթագրության մեջ,— այս գրույցը սյուժետային մեծ ընդհանրություն ունի վերը բերած Հուդայի պարականոնի հետ։ Հին հունական առասպելում պատմվող Էդիպի կյանքի մանրամասները, որ էպիզոդիկ անցել են բիբլիական Հուդային, սրանից էլ փոխանցվել են պատմական անձնավորություններին, եկեղեցու հայրերին, մինչև իսկ «անքննադատելի և անսխալական» Հռոմի պապին։ Այս գրույցում Գրիգոր պապն է ենթարկված Էդիպի ճակատագրին, միայն մի տարբերությամբ՝ ապատեղ ոչ թե ճակատագրից, այլ աշխարհիկ կյանքից ու մեղքերից խուսափող և փախչող Գրիգորը ինքն է դառնում աշխարհիկ ամենամեղսական արարքների մասնակից ու հերոս, բայց, վերջում, ինչպես հատուկ է քրիստոնեական գրականությանը, մեծ ապաշխարությամբ մաքրագործվում է և սրբի պատկով զարդարվում»[2]։

Այս հետաքրքրական վարքը թարգմանական է։ Ինչպես նշում է պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանը ժողովածուի առաջաբանում, այն թարգմանված է լատինական հանրահայտ "Gesta romanorum„ ժողովածուից, «ամենայն հավանականությամբ XII դ. Կիլիկիայում, երբ հայ և կաթոլիկ եկեղեցիների միջև բանակցություններ էին վարվում և երբ Ռուբինյան հայկական պետության մեջ կաթոլիկների համար նպաստավոր պրոպագանդա էր մղվում»[3]։ Միանգամայն հավանական այս ենթադրությանը հաջորդում է Կիրակոս Գանձակեցու Պատմության վրա հիմնված որոշակի եզրակացությունն այն մասին, թե այս վարքի թարգմանիչն է Ներսես Լամբրոնացին։ «Ինչպես վկայում են

---

[1] «Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից» խմբագրությամբ և առաջաբանով Կ. Մելիք-Օհանջանյանի. ժողովածուի նյութերն բնարեցին, տեքստը պատրաստեցին և ծանոթագրեցին Ավդալբեգյան Մ., Մկրտչյան Մ. և Սրապյան Ա., Երևան, 1957։

[2] Նույն տեղում, էջ 263։

[3] Նույն տեղում, Առաջաբան, էջ XXVI։